

ՏՆՕՐԵՆ - ԽՄԵՆԱԳՐԱԳԵՏ  
Հ. ՄԱՄՈՒՐԻԱՆ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՏՎՐԵՎՈՆ 500 ՂՐԵ  
ՎԵՑԱՄՍԵՍ 250 »  
ԵՐԱՄՍԵՍ 150 »

Բաժանորդագրուցիւնք կ'սկսին  
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՈՆ

Fondateur  
Մ. Mamourian  
Directeur - Rédacteur en chef  
H. MAMOURIAN  
ARÉVÉLIAN MAMOUL,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քաղաքական կուսակցութիւններն անկազմակերպ ազգերու և քաղաքական կեանք չունեցող ժողովուրդներու համար եթէ վըսակար հիմնադրութիւններ նկատուած են, նոյնքան և կարևոր են անոնք երբ այդ ժողովուրդներն որոշ քաղաքական կերպարանք մը ունին և կ'ապրին իրեն անկասկած ուրոյն պէտաութիւններու

Մինչև այսօր Հայը չէր ունեցած քաղաքական ինքնուրոյն կազմակերպութիւն, որով չէր ալ կրնար ունենալ քաղաքական կուսակցութիւններ, որոնք իրենց գոյութեան իրաւունքն կ'առանան երկրին խորհրդարանական կազմին մէջ, հոն՝ արժեքներու համար իրենց ծրագիրներն, գաւառականներն և ըմբռնումները յօգուտ իրենց պատկանած հայրենիքին:

Սակայն այժմ ինդիւրը կ'տարբերէ, վաղը միւս օր Հայը պիտի ունենայ իր պետական կազմը, պիտի տիրանայ իր հայրենիքին և վեց հարիւր տարիներու տարագրութիւնէն վերջ, պիտի արժանանայ իր գարաւոր իտեալին:

Դէպքերու այս գահավէժ ընթացքին առջև, անպատրաստ չգտնուելու և յանկարծական անորոշութեան մը չմտանուելու համար, այժմէն շարժում մը սկսած է ուրուազմուել. կազմելու համար մեր հայրենիքին կարիքներուն և պահանջումներուն յարմար քաղաքական կուսակցութիւն մը, անոր մէջ ձուլելով կոմկուսական ժողովրդական կուսակցութիւնն և թրքահայ ու արաբաստաններն Ռամկավար կուսակցութիւններն և այսպէս կազմելու գորաւոր պլան մը, որպէս զի լիւրջ ներկայացուցին ու արտայայտին ըլլալ բուն իսկ Հայ ժողովուրդի ստաւը մեծամասնութիւնը, որ մ'ընչև այսօր մեկուսացած կ'մնար և պարզ հանդիսատեսի դերէն գուրա չէր կրնար իր շուրջ տեղի ունեցող անցուցարձեւներն և իր շուրջ պտուտկող կարգ մը կուսակցութիւններու գործառնութեանց ու արարքներուն, բաւականատալ ընկալուած զմտոնք. երբ իր գաղափարներուն համապատասխան գործիակերպ մը չունենային, ազգային կարգ մը կենսական խնդիրներու մէջ:

Ժողովրդական կուսակցութեան կազմութեամբ ժողովուրդն կ'առկուի իր ընդգրկած չէզոքութիւնն թոթափել, քաղաքական կեանքին մէջ իր տեղը բռնել և ազգին ճակատագրին մասին իր հեղինակաւոր ձայնն լսելի բնիլու կարելութիւնն ունենալ:

Այս նոր կուսակցութեան կազմութիւնը, ցաւալի է բոլոր թէ՛ հաշտ աչօք չգիտուելու արդէն գոյութիւն ունեցող կարգ մը կուսակցութիւններու կողմէ, ցաւալի է կ'ըսենք, որովհետև անոնց ընթացքն ենթադրել կ'առիպէ մեզի թէ իրենք կուսակցականները ըլլալով, չեն ըմբռնած և գնահատած կուսակցութեանց օգուտն, մեր խօսքն քաղաքական կուսակցութեանց վրայ է. և կուզեն միայնակ մնալ, ազատօրէն գործելու, սզատօրէն տնօրինելու և ինչպէս արդէն փորձերն ցոյց տուին պատարէն և ըստ հաճոյս տիրապետելու:

Եթէ մեր վաղեմի կուսակցութիւններն իրապէս հասկցած են կուսակցութեանց օգուտը, իրապէս գնահատած են անոնց բարերար դերը դուս քաղաքական հողի վրայ, ընդհակառակն պէտք է գոհունակութիւն զգան որ ուրիշ կուսակցութիւններ ևս կ'ուրուագծուին ու կեանք պիտի ստանան և այսպէսով իրենց ունեւորու. վրայէն ծանր բեռ մը պիտի ելնէ. աւելի ազատ պիտի ըլլան և հայրենիքի վերաշինութեան նախնական ու կարճուածէն շատ աւելի փափուկ գործին պատասխանատուութիւններն մէկէ աւելի կուսակցութիւններու վրայ պիտի ծանրանայ:

Մինք այսպէս կ'ըմբռնենք հայրենիքի օգուտն ու անոր համար մեր ունեւնալիք սէրը Մինք չենք կրնար երբէք ընդունիլ թէ՛ միակ կուսակցութիւն մը պիտի փափաքէր անոր ծանրութեան տակ կ'ըլլէ և անարկու պատասխանատուութեան մը բեռին տակ ջախջախուել:

Պատուութիւնն մեզի կրնայ մէկէ աւելի օրինակներ ալ ի հաստատութիւն մեր պարտած տեսութեան: Հոն՝ որ երկրի մը ճակատագիրը մնացած է միակ ձեռքերու մէջ, կամ միակ կուսակցութեան մը պատասխանատուութեան տակ, աղետաբեր վախճան մը ունեցած է, ուսկից յառաջ եկած է Հոգովեան կանկարութեան անկումը, ուսկից յառաջ եկած է Բիւզանդական կայսրութեան կործանումը, աւելի յառաջ երթալով, ինչո՞ւ ծագեցու Ֆրանսական յեղափոխութիւնն. ի՞նչ պարագաներու արդեւնք է Ռուսական ներկայ քառորդ Հապա՞ Գիւրմանական հակապիս զգեստումը, և մեր աչքերուն առջև թուրքոյ ներկայ վիճակը:

Որովհետև կայսրներ, թագաւորներ, Զարեք ու զեյնի քեհանտօրէն կուսակցութիւն իրենց ժողովուրդները, որովհետև օրէնքն ու արդարութիւնն մտրունացած էին իրենց ամբարտաւան եսին վրայ, որովհետև միակ կուսակցութիւն մը արհաւիրք օւ սարսափ սպառնալիք իր չորս կողմը, լսեցուցած էր թուրքոյ քիչ թէ շատ կենսական սարքերը և երկրին ճակատագիրը իրենին հետ կապած:

Արդեւնքները մէջտեղն են և ո՞վ կրնայ հաստատել թէ՛ թուրքիա ի թիւ հատի կուսակցութիւնն զատ եթէ ուրիշ կուսակցութիւններ ևս ունենար, վերջ ի վերջոյ առաջնոյն պիտի ուղղութեան ժողովուրդն հասու չպիտի գտնուար, չենք ընդգրկուողի կուսակցութեան մաքուտումներուն և չպիտի յաջողեր զայն տապալել և երկրին ճակատագիրը բոլորովին ալլափոխել:

Այս ամենն շատ լաւ պիտի մեր կուսակցութիւններն, և եթէ չգիտնան ամօթ մը պիտի ըլլար իրենց համար, հեռուարար չենք կրնար ըմբռնել թէ՛ ինչո՞ւ հաշտ աչօք չեն նայիր ժողովրդային կուսակցութեան մը կազմութեան

և օրինաւոր հողի վրայ, օրինաւոր պայքար մղելու մղձաւանջէն կ'արտասփին, անչուտ բոլորովին անհիմն և անկայուն նկատուներով:

Եթէ իրենք ժողովուրդէն ծագում առած են, անոր ծոցէն լոյս տեսած, չենք հասկնար թէ կազմակերպուած կամ կազմակերպուելիք քաղաքական որևէ նոր կուսակցութիւն մը որո՞ւ ծոցէն ու գրկէն ծագում պիտի առնէ, թէ արդե՞ք գիրենք ծնող մայրերու սիրուէզը նոյեան տապանէն ելած չէ և տարբեր մոլորակէ մը աշխարհ եկած:

Ո՛չ, մտանալին հասած է որ ամեն օք իր պարտքը վճարէ իրեն պարգրուելիք հայրենիքին, այդ հայրենիքն չկրնար մենաշնորհն ըլլալ որոշ դասակարգի մը, որովհետև այդպիսի պարագայի մը ուղղակի գերեզման պիտի իջնէր, այլ պէտք է պատկանի այն՝ բոլոր հայութեան և այդ հայութիւնն կազմող բոլոր անդամներուն, որոնք վաղը միւս օր պիտի ստիպուին իրենց գաւառականներուն և սկզբունքներուն համապատասխան քաղաքական կուսակցութեան մը պատկանել և իրենց չէզոքութիւնն թոթափել, եթէ կ'ըզեն ապրիլ ազատ հայրենիքի մը իրեն ազատ քաղաքացիները:

Հ. Մ.

## ՊՕԼՍԱԿԱՆ ԵՒ ՆԱՄԱԿԱՆԻ

(Մեր մասնաւոր թղթակցէն)

Կ. Պօլս 7 Սեպտ. 1919

Ազգ. վարչական շրջանակներուն մէջ նորութիւններ չէ որ կը պակսին վարչական կազմակերպութիւնը հետընտէն առաջ կը տարուի Այս շարժու վարչութեան անդամներուն վրայ աւելցան երկու անձ, որոնցմէ միայն մէկը Յովակիմ Տէրմիկեանն ստանձնեց իր պաշտօնը և մինքն հրամարեցաւ:

Վարչութիւնը՝ հիմա իր սեղանին վրայ ունի քանի մը հիմնական նշանակութիւն ունեցող կարգադրութիւններ, որոնք իր ծրագրին հետ միասին յառաջիկայ շարժու պիտի ներկայացնէ Ազգ. ժողովին:

Ներկայացուելիք օրինագիծերուն ամենէն գլխաւորն է Ազգ. Տուրքի կանոնադրը որ վարչութեան ելնաբաւական յանձնարարութեան և հանդիմանակիչ մասնախումբը միասին պատրաստած էին, և այս շարժու վարչութիւնը ընկած և նպատակադարձար գտած էր:

Նոյնպէս Ազգ. ժողովին պիտի ներկայացուի այն «բոլորեքը» որ երեք յարմարանումներու համազարժակցութեան համար պատրաստուած է, ինչպէս նաև Ուսումն. Որոշուրդի ծրագիրը Մօս տանէն պիտի յրուի նաև Ազգ. ժողովին ամուսնական օրէնքը որ պատրաստուելու վրայ է Այս կեպով Ազգ. ժողովը պիտի սկսի իր օրենսդրական աշխատութեանց, և իր օրակարգին վրայ պիտի ունենայ շարք մը օրէնքներու նախագիծեր:

Այս բոլորին մէջ վարչութեան համար ամենէն կարևորը սուրբի կանոնադրն է, փաստիք գրամի խնդիրը պոյութեան հարց գաւառով սկսած է:

Չինագաղտրէն այս կողմ անցնող ինը ամիսներուն մէջ բոլոր եզրածախները, պատրիարքարանի, կարօտաւալի, գողթականի, սրբի, սարագրեայի և ուրիշ զանազան անուններով, ամենքն ալ նպատակով մատակարարուած են:

Առաջին թափով բնական է որ չէր կրնար մնալ այս գործը, որ հեռոցհեռէ ամիսներ նշաններ ցոյց տու սկսուտ Այսօր նպատակները սերտակարան են զմտադրուելու յարանուն ծախքերը և խնամատարութիւնը ինքզինքն անկարող կ'զգայ պէտքերուն հասնելու և իր գործառնութիւնները զայգ-

րեցնելու պատանալիքը կ'ընէ: Վարչութիւնը շիթած այս կացութեան, առջև կը մտածէ երկու բանի վրայ: Նախ ապահովել հաստատուն ամսական հասոյթ մը տուրքի դրութեամբ, և մնացեալին համար մտածել հիմնական կարգադրութիւն մը, որ եթէ շատ վատն ըլլայի ստացած տեղեկութիւններու վրայ, ձեռք կը հարկուի Սալայի միայն թող վեր առնել և շրջել ինչ որ կը լսուի խղճմտիտ գործ չէ լրագրողի մը համար որ յաճան չեզանն ալ եզրած գարձներու պաշտօն ունի շեռեւարար առանց երաշխաւորելու եւ վերապահութեամբ կը հարգեմ թէ լսածիս համաձայն վարչութիւնը որոշած է Բարիդի պատմութեան միջոցաւ ի հաշիւ ապագայ Հայ կառավարութեան փոխանակել փոխառութիւն մը կ'ընել:

Միայն սրբերու խնամատարութեան և գողթականներու ներկայից յատկացուելու համար: Այս ծրագրերը սղովնային վիճակի մէջ, սակայն կը հաստատէ թէ Կ. Պօլսոյ և Բարիդի գրութիւնը իրապէս ամենէն ինաստուն և պատարեր մէկ ձեռնարկը պիտի ըլլայ արդի վարչութեան որ հայտնակ շատ ազմուկ չհանելուն իր շուրջը բոլորովին անգործ մնացած չէ:

«Ճակատագր» երէկ խմբագրականով մը կը պահանջէր որ վարչութիւնը իր ծրագիրը ժամ առաջ ներկայացնէ Ազգ. ժողովին և ասոր համար քննադատութիւններ կ'ուղղէր: Ասկիս կուսակցական զեղեցիկ սովորաբարութիւն մըն է որմէ չեմ գիտեր թէ խարուող պիտի ըլլայ Ռոսիկեան «Ճակատագր» գրութի թէ այս շարժու պիտի ներկայացուի այդ ծրագիրը, պահանջողի գիր կատանանէ, հանրութեան մէջ սո համազումը առաջ բերելու համար թէ գաշնակցութեան պահանջումին առջև սարսափած... տեղի տուաւ և ծրագիրը ներկայացուց:

Ասկիս տնտեսաբար թիւն չէ՞ տպարան է:

Շարժու Կ. Պօլսի երկու Պուլկարիկ Առաջնորդը Տ. Ղե. սոյ կ'ըսէ, Գործիւն, որ վարչութիւնը բացատրութիւն պահանջելու համար Կ. Պօլս կոչած



էր: Տ. Ղևոնդ եպ. լրագրողներու իր  
ըրած յայտարարութիւններով իբր  
ամբաստանեալ չէ որ կ. Պոլիս կուգայ  
այլ իբր գատախաղ, և համարձակ կը  
պահանջէ որ իրեն զէմ բողոք ունե-  
ցողները մէջ տեղ ելլան և իրեն զէմ  
ունեցած բողոքներն պարզեն:

Տեսնենք թէ ի՞նչ արդիւնք պիտի  
ունենայ:

ԱՐԿԱՍ ԱՆԿԵՂԱՑԻ

**ՀԱՅԵԼԵՐԻ ՄԵՋ**

Կարո՞ց պիտի երթանք, ուսում  
պիտի սորվինք, կրթութիւնն պիտի  
ստանանք, թէ ոչ գեղարտի ու նազելի  
օրիորդներու մանկալուստի, պայտիկի,  
ասպետը պիտի ըլլանք, աս տարբե-  
րութեամբ որ լսեալի տեղ՝ փայտէ  
երկար ձող. բարձի տեղ՝ զունուոր  
զրօշկներ և սաղաւարդի տեղ՝ թաղ-  
եայ գլխարկներ կ'կրինք...

Կ'երևի թէ այն վայրկեանին որ  
սքառութեան դուրսէն արդիւնք ու-  
ցաւ մեր մէջ, այն համարումն ևս  
ունեցանք թէ այլևս ուսում, կրթու-  
թիւն, մէկ խօսքով վարժարան, ու-  
սանդուլներ երկրորդական կ'մնան և  
տղայ մը սքառութիւն ըլլալով ամեն բանի  
տիրացած կ'ըլլայ իր համազգիտով,  
թաշկնակով, կողով և գիւղով և շը-  
նորհիւ սքառութիւնու, ինծի անծա-  
նօթ երող սուրբին հրեղէն լեզուներով  
որ մըն ալ ամենագէտ կ'ըստնայ:

Կրնայ ըլլալ պիտի մտածէի, եթէ  
վաղուց հրաշքներու զարը անցած  
չըլլար:

Չեմ գետեք թէ սքառութիւնու ծը-  
նողները տեղեկութիւն ունին իրենց  
զաւակաց այս նորաստեղծ ու նորա-  
ստեղծ ընթացքէն, եթէ ունին, ինծի  
խօսք չմտար, և հիացումս և ապ-  
շանքս արտայայտութիւնները կ'ընեմ  
յոստ իրենց՝ գիտակցօրէն՝ զօրծելու  
այս եղանակին առջև...

Իրաւ է որ այս սքառութեան դաս-  
տիարակութեան համեմատ վարժա-  
րաններն անոնց չարտիցուցածը պիտի  
կրնան դուրսը սորվիլ... կարգապահու-  
թիւն, ուղղամտութիւն, բարեկրթու-  
թիւն, բարեմտութիւն, որոնք վար-  
ժարանը չկրնար թելագրել և սքառու-  
թի պիտի միայն ատակ պիտի ըլլայ  
այդ ամենն տղուն ուղեղին մէջ նե-  
րարկելու, միևնոյն ատեն անոր ու-  
սուցանելով առանց պատճառի, սքա-  
ռութի պետի մը հրամանով վարժարա-  
նէն բացակայել, արկածախնայու հա-  
մար օրիորդներու ընկերանալ, զրամ  
հաւաքելու համար և իրմիտի փողոց-  
ներն ու գիւղերը գեղեցիկ միշտ յա-  
նուն մարդասիրութեան և այս երէկը  
վաղը ալ պիտի ունենայ, և շարունա-  
կաբար նորութիւններ պիտի ստեղ-  
ծուին՝ սքառութեան գումարասկները  
չարժման մէջ զնեղու համար...  
վերջը...

Վերջը... բայց ինծի է մնացեր  
այդ վերջը ցոյց տալու, երբ ծնողնե-  
րուն կ'վերաբերի այդ վերջին վրայ  
մտանել և ազգային վարչական մար-  
միններուն՝ թուամբ մը զնեղ այս սան-  
ձարձակ և ինքնազուխ արշաւանքին  
և արգելակ մը այս սքառութեան  
չփայտումին առջև, որոնց համար իմ  
ըրած այս քանի մը գիտողութիւն  
ներս, որոնք բամպակի մէջ փաթա-  
թելու ամեն ճիգ թափեցի. — թերևս  
մասնաւոր փութկոտութեամբ մը ծուռ  
մեկնելու ջանադիր գտնուին, առանց  
անոր ոգիին թափանցելու և առանց  
ըմբռնելու որ այդքան փութկոտու-  
թիւն ցոյց տալու բնաւ և բնաւ  
հարկ չկար ձեռնարկի մը համար որ  
օտարներու կ'պատկանէր. — որոնք  
մեզի համար իրենց մատին ծայրն ան-  
գամ շարժելու չյօժարէի զատ...  
ինչ և է. — և այսպէս պարտազանց  
ըլլալ վարժարանէն խորովին բացա-  
կայելով՝ միշտ յարգած ըլլալու իրենց  
պետեղէն մէկէն ուսած՝ այդ չնաչ-  
խարհիկ կարգապահութիւնը...

**ՀԵՐԲՄԱԳԻՐ**  
Ստորեւ կ'հրատարակենք Մ. Պրըմի  
կողմէ խորագրութեանս զրկուած  
հերթմագիրը հրատարակելու խնդ-  
րանքը:  
INTERNATIONAL COLLEGE  
Paradise, Sept. 18, 1919  
The Editor of «Arvelian Mamoul»  
Smyrna.

Sir,  
Yesterday there appeared in your  
paper an article against which I wish  
to earnestly protest. The article re-  
ferred to is the one in which my ad-  
dress to the American sailors on the  
Scorpion is reported. This article is  
filled with inaccuracies and is abso-  
lutely misleading. My remarks have  
been distorted so as to give one an  
entirely wrong impression of what I  
actually said.

My address was not delivered  
in the Protestant Chapel, as stated in  
your article, but at the regular morn-  
ing service on board the U. S. S.  
Scorpion. Your article conveys the  
impression that I not only condoned  
but even commended the cruel acts  
and atrocities of the Turks in the  
name of religion. On the contrary,  
with the most ardent Armenian, I  
believe that such acts as have been  
committed are abhorrent and diabolical  
and inexcusable. My only plea  
was for consecration to a missionary  
ideal, and that national security for  
all the races of this country will on-  
ly be assured when, upon the Turks  
as well as the Greeks and Armenians,  
there are being brought to bear the  
character forming influences of Chris-  
tian education and civilization.

To protect yourself from misrep-  
resenting one who feels himself to be a  
genuine friend of the Armenian peo-  
ple, as well as to guard me from  
being misunderstood, I feel sure you  
will be glad to give publicity, in  
English as well as Armenian, to this  
letter in your columns.

Yours very truly,  
**JOHN KINGSLEY BIRGE**

**ՔԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՕԼԷՃ  
Բարսիսո 18 Սեպտ. 1919  
Ուրազգրայեզ  
«Արեւելեան Մամուլ»-ի

**Տէր,**  
Երէկ ձեր օրաթերթին մէջ հրա-  
տարակուած յօդուածին զիմ կողմ  
ըջօրէն բողոքի: Յօդուածը կ'սկսար-  
կէր «Մթորթի»-ի Ամերիկեան նաւազ-  
ներուն ըրած մէկ ուղեգրիս Սյո յօդ-  
ուածը ծայրէ ի ծայր անճիշտ ու բա-  
ցարձակապէս սխալ է, պատրիկ է:  
Իմ գիտողութիւններս բոլորովին խե-  
ղաթիւրուած են այնքան որ իմ իրա-  
պէս ըսածներուս մասին հիմնովին սը-  
խալ տպաւորութիւն կ'թողուն:

Իմ բանախօսութիւնս արտասանած  
չեմ բողոքականաց եկեղեցին, ինչպէս  
ձեր յօդուածին մէջ կ'ըսուէր. այլ  
«Մթորթի»-ի մէջ՝ առաստեան կանո-  
նաւոր պաշտաման ատեն: Ձեր յօդ-  
ուածն այնպիսի տպաւորութիւն մը կը  
թողոր որ ես ո'չ միայն ներած այլ և  
զոված եմ թուրքերուն յանուն կրօնի  
զօրծած անգթութիւններն ու իմզը-  
ժութիւնները: Ընդ հակառակն, ամէ-  
նէն եռանդուն նշանակու հետ, կը հաս-  
տատ թէ զօրծուած այսպիսի արտաբ-  
ներ գարշելի՛, գիւսային և անհրեղի  
են Միայն ու միայն միսիոնարական  
իտէալի մը անձնուրութիւնն էր որ  
չատազուղեցի և յորեցի թէ այս եր-  
կրին բոլոր ցեղերուն ազգային ա-  
պահովութիւնն, ինչպէս թուրքերուն  
նոյնպէս Յունաց և Հայոց, պիտի երաշ-  
խաւորուի այն ատեն՝ երբ Քրիստո-  
նէական գաւառաբարկութեան ու քա-  
ղաքակրթութեան ազգային ու շինիչ

Վտան իմ թէ ուրախ պիտի ըլ-  
լաք հրատարակելով ներկայ գրու-  
թիւնս ձեր թերթին մէջ, պատապ-  
նելու համար զձեզ սխալ ներկայա-  
ցնելէ անձ մը՝ որ կ'զգայ թէ հարա-  
գատ, ճշմարիտ բարեկամ մըն է Հայ  
համայնքին, ինչպէս նաև զիս՝ սխալ  
հասկցուելէ:  
Ձերդ համարիւ  
ձՕՆ ՔԻՆԿՍԼԻ ՊԵՐՃ  
Թղթ. Ա. Կ.

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԻ ԽՆԴԻՐ**

Սղջային Համագումարին անգամ-  
ներէն մին, զրօշի առաջարկին հա-  
մամտութիւն յայտնելով, կ'հարցնէր  
ինձ վերջերս թէ որն ըլլալու է մեր  
ազգային երգը «Բամ... փորտան»  
թէ «Մեր հայրենիք»: Խնդիրը հան-  
րային կարեորութիւն ունենալով,  
կ'արժէ ընթերցող հասարակութեան  
առջև քննել զայն:  
Երկու երգերն ալ իրենց կուսակից  
զերն ունին Կան ալ որ «Տէր, կեցո»  
ին կողմակից են «Բամ... փորտ-  
ան» Marseillaise էն ներշնչուած, կ'ե-  
րևի «Տէր, կեցո» God save the king  
էն «Մեր հայրենիք» իտալեան ծա-  
ղում ունի:

Առաջինն, իր իմաստով ու եղա-  
կով, կատարեալ քայլերդ մէջ նմա-  
նածայն ներդաշնակութեան տիպար,  
կը գոսայ ու կ'գոսացունէ, թեւեր  
կուտայ զնեւորին, որ կրակին մէջ կը  
նեւտուի անհրկելի, բաւ է որ հասկը-  
նայ բառերուն նշանակութիւնը:

Երկրորդը օրհնարութիւն մ'է, տե-  
սակ մը Te Deum եւ ոչ քայլերդ: Տի-  
րացուներ կրնան երգել զայն իտալ-  
նին առջև, այլ ոչ զինորսեր ու զ-  
մաղաշտին վրայ:

Երկուզն ալ ունին խոշոր ան-  
պատեհութիւն մը, որով արժանի  
չեն ազգային երգ դառնալու. — Գրա-  
բար լեզուով յօրինուած են, եւ գրա-  
բար անիմաստի է ժողովուրդին:  
Նոյն իսկ գրաբարներ կան որոնք չեն  
կարող որոշել թէ «Բամ... փորտան»  
ըսելու է թէ «Բամբ որտան», եւ  
հազար Հայերու մէջ հազիւ կ'գտնուի  
մէկը որ գիտնայ թէ ինչ ըսել է Բամ  
և ինչ փորտան:

Երբ ֆրանսացին իր Marseillaise ը  
կ'երգէ, կ'հասկնայ անոր մէջ մի բա-  
նը ուստի իր բոլոր հոգիով կ'երգէ:  
Կատնիսները իտալեանին գրաբարն է  
եթէ կարիպատիին ձօնուած երգերը  
լատիներէն ըլլային, միթէ իտալեան  
ժողովուրդը պիտի սղեւորուէր ա-  
նոնցով. — Ոչ երբէք Մեր ազգային  
երգը աշխարհարար միայն կրնայ ըլ-  
լալ: Յիշենք վեղարու Իւկոի պատգա-  
մը. «մեռած լեզու մը խօսողը իր մը-  
տածումը գերեզմանի կ'զատապարտէ»:  
«Մեր հայրենիք» աշխարհարար  
ըլլալու առաւելութիւնն ունի: Մա-  
կայն իր իտալեան յրացումով ու և-  
զանակով, նուազ ազգային է քան՝  
զոր օրինակ՝ «Ձայնը հնչեց էրգու-  
մի Հայոց լեռներէն» ըլլալու պատճառ է,  
կամ տեւիլ լալկան իրաւունք, անտէր  
ի պէս բաւերով: Այս ոճը չ'յարմա-  
րիր քայլերդի, որ գոտ շեշտերու կ'կա-  
րտուի: Հերթը ողորակուած շլատեցին  
զմեղ թուրքերէն քերթողներ, որոնք,  
հայութիւնը մեռած կարծելով, անոր  
գոգաղին հեռեկան եղբարամայրներու  
ջողի մը պէս սև հագած ու մոխի-  
րով ծածկուած: Թող այդ վայրերուն  
ները լսեն այսուհետև եւ թող ազատ  
Հայաստանի արգանդին մէջ խայտան  
վարութեան հանձարն ու ետքանհա-  
նի կորովն ունեցող պուշտներու Պա-  
տն իր հանրապետութեան գոբու  
վանակց բանաստեղծները, իբր վնա-  
սակար երազատեաներ Մերք ալ ի-  
րաւունք ունինք գոտապարտելու մեր  
այն քերթողներ որոնք գարեբէ ի վեր  
հեծեցին ու հեծեծեցին. մոռնալով թէ,  
ասիացի բարբարոսներէ պաշտուած  
ժողովուրդ մ'ըլլալով, պէտք ունինք  
սպարտական հողի մը գարննելու մեղ:

Մեր զրական բուրբ կրնան օրի-  
նակ տունել նոյն իսկ կէս դար առաջ  
փայլող արտաստեղծութեանք գրաբար  
մը: Քէմալ Պէյ իր ազգին համար գը-  
րեց քայլերդ մը, որ այնքան պարզ  
որքան կորովի տուներ կ'պարունակէր  
ինչպէս հեռեկանը:  
Վերջը շքանշանն է կտրիճի մատնին.  
Մանն ալ վերջին սասիանն է զինորին.  
Միևնոյն է սակնայ, վերան ալ հողին.  
Հասկի, քայլեր, հայրենիքի օգնութեան:  
Քանի որ մեր արդի երգերը ան-  
պատեհութիւններ ունին, անհրաժեշտ  
է որ նոր մը յօրինուի: Ուստի կառա-  
ջարկեմ որ հայ գրաբարներէ ու երա-  
ժիշտներէ կազմուած մասնախումբ մը  
մրցման դիմ նախ քերթուածը, յե-  
տոյ եղանակով երբէք բանաստեղծնե-  
րու այնքան առատութիւն չենք ու-  
նեցած որքան այսօր. երաժիշտներու  
սով ալ չունինք: Ռոմի մը չի ոչ մեծ  
քերթող էր, ոչ նշանուոր երաժիշտ.  
և սակայն, հայրենասիրական խանդա-  
վառութեան նուազ մը մէջ, կը ցու-  
ստեղծել Marseillaise մը որ ազգային  
քայլերդներու տիպարը պիտի մնայ  
յուրիտեան:  
Սեպտ. 18 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Մտեթը գեա նոր իր փէշերը փռած  
էր ամեն կողմ:  
Կանգնած եմ Քորածի նուամա-  
տոյցին տարուբերող, շարժական  
տոխտակամանի վրայ, կռնակ տը-  
ւած սրէն մը՝ կը նայեմ հեռացող  
Վիթխարի մարտանաւին ետէն ուր  
եկեկտրական արծաթեայ պայտին  
լոյսերը՝ առանձին խորհրդածութիւն-  
ներու նախադուռ մը կը բանան իմ  
գանկիս մէջ:  
Եւ ես կը խորհիմ.

Ան կերթայ գէպի վերջուլոյս, զէ-  
պի արևի թաղուած ու հրկիզուած հո-  
րիցունը, ու աշխարհ առջևէն մէկմէկ  
կուգան ու կանցնին Արևմուտքի  
մարդկային ուղեղներու ստեղծագոր-  
ծութեան հրովաւ, երկինքանգ պատ-  
կերներ, որոնք, երևակայութեանս  
մէջ, նոր բանօրամայի մը կը վերած-  
ւին:  
Անա՛ կունցնին կատարելագործուած  
չոգեկաւքեր, մաքուր և արագընթաց  
անա՛՛ եկեկտրեան լոյսեր, որոնք ան-  
զպալի կը գարնենք քիշերը.  
Անա՛ մարդատար ու փոստատար  
սաւառակներ՝ որոնք զիտողին հրճ-  
ւանք ու հիացումնք չպատճառած  
չեն անցնիլ. և վերջապէս անա՛՛ էյ-  
ձեյլի աշտարակը՝ որուն վրայ գետեղ-  
ւած է Մարկիսի անթիւ հեռագիրը.  
և այս բոլորը, բոլորը որքան մեծ  
գեղեցկութիւններ են, փայլուն գոհար-  
ներ՝ մարդկային մտքի ստեղծագոր-  
ծութեան պատմութեան համար:  
Յանկարձ, նուազատի մը բարձր  
ու կոշտ ձայնով՝ ինձ համար անե-  
տաքքիլ յայտարարութիւնը, կուգայ,  
մտավարարչի վրայ շարուած պատ-  
կերներուն թելը կը կտրէ...  
Ես կը գոտնամ գէպի Արևելք ու  
հարց կուտամ. — ապացոյց տո՛ւր նա-  
յիմ՝ զուն ինչ ես ստեղծեմ, եթէ ո'չ  
առաջ՝ գոնէ վերջին տարիներս:  
Պատասխան չկայ:  
Կը տեսնեմ ամառութիւն մը միայն,  
որտեղ մարդկանց եսը, փոստաւոր-  
ութիւնն է զարգացեր, Ֆիզիքական է  
կոշտացիր, իսկ իմացակառութիւնը  
որոշ կէտէ մը անդին չ'անցնիր:  
Ինչը ըրիք դուք, կը հարցնեմ:  
Նորէն պատասխան չկայ:  
Ու ես ջղայնացած, երևակայու-  
թիւնս կը տանիմ Արևելքի երկրա-  
մասի մը վրան՝ Հայաստան:  
Ամառութիւն, ո'չ մարդ է մնացեր,  
ո'չ կինդանի և ո'չ ալ բուսականու-  
թիւն... անա՛՛ տոյք երկրամասին վրայ  
ապրող մարդկանց քանե-  
րորդ զարի գիւնեցը:  
Եւ ես գլխիկոր, խոհերուս մէջ  
միբնուած, յամբաքայլ կը հեռանամ  
գէպի տուն...  
ԹԱՓԱՌԱԿԱՆ





ԱՐԱՐԱՅԻ ՄԵՐ ԱՆՄԱԶ ՇԵՐՈՒՆԵՐՈՒ ՓԱՌՔԻՆ ԶՕՂՈՒԱԾ ԱՂԵՆԱՐՇ ՅՈՒՇԱԳԻՐՔԸ

Պատկերագրող շինող հաստոք մը զոր հեղինակը վերաբերելու լայն կ'ընկնայ:

ԱՐԱՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԻՒԻ ԳՐԱՆ Է 75 ՂՐՈՒՅԸ

Մի մտանախ «Արարած»-ին օրինակներ նուրբ դրկել հայ որպե՛րուն և կրթական հաստատություններուն Դիմել՝ ՔԵՇԻՇԵԱՆ և ՄՍՄՈՒՐԵԱՆ տպարանները: Ֆրանկաց թաղ՝ Գ. ԱՐԱՐԱՅԻ ԳԱԶԱԶԵԱՆԻ և ՀԵՂԻՆԱԿԻՆ

Ազգային Անցուկարմ

Ազգից շուրջ ամիս մը առաջ Ազգ. Առաջնոց դարանի մէջ գումարուած խորհրդակցական ժողովին մէջ խմբագրուած բողոքի հեռագիրը Անատոլի անապատութեան մասին, որ հաղորդուած էր համաձայնական պետութեանց ներկայացուցիչներուն, ընդ որս և հելլէն վարչապետին, Տեղւոյն հելլէն բարձր-քովիսեր Գ. Սթերիա-հատի կողմէ հետեւեալ հեռագիրը հաղորդուած է Առաջնորդարան, որ նոյնութեամբ կ'հրատարակէր ներկայիս մեր ընթերցողներու գնահատման

PARIS, 28. 8. 1919  
STERGIADES  
HAUT COMMISSAIRE - Smyrne.  
En réponse télégramme communiquant protestation communautes Arméniennes nous prie assurer président Hovan Garabédian que envoi Arméniens pour situation preciaire Anatolie est partage par hellénisme avec toute sympathie et solidarité qui unissent les deux peuples.  
VENIZELOS

— Երէկ առաւօտ Տ. Յովհան Մ.Վ. ընկերակցութեամբ Տ.Ս. Ժամկոչեանի այցելած է ամերիկեան ազգայնաց Որբանոցը (նախկին տիւրքոնէջ) ուր կրկար տեսակցութիւն ունեցած է տեսչուհի Տիկ. Բնորձուտի հետ, հայ որբուհիներու դաստիարակման և բարոյական հարցերու շուրջ: Տ. Յովհան Մ. Վ. նմանապէս առաջարկած է որպէսզի որբուհիներու թիւը աւելցնել որբանոցը:

— Պայտաքը Եւանստի փաշայի նախկին ապարանքը վարձուած է ազգին կողմէ ուր պիտի փոխադրուին ազըւկանց ապաստանարանի որբուհիներն և Պոլսէն գալիք ու Իզմիր գտնուող մանկապարտէզի տարիք ունեցող որբերը, շէնքի վարձուով և այլ ձևակերպութիւններն պիտի կատարուին այսօր:

— Ազգ. Կ. Որբանոցի վարչութիւնը հետզհետէ սկսած է տեղուս վրայ գտնուող որբերն արձանագրել և 80 հատի համար արդէն պատրաստութիւններ կը տեսնուի:

— Ազգ. Կ. Որբանոցի կ'ուսիրէ նոյն հաստատութեան վարչութեան ատենապետ Գ. Միհրան Ազնաւորեան 20 օրինակ «Արարած»:

— Պօղոս Նուպարի վերջին կողին նախաձեռնարկ կ'ըլլայ Պօղոսեան վարժարանի Պօյանեան սանուց Միւսթիւնը նուրբերով 32 ուկի:

ՀՐԱԻԷՐ

Պարբերող նահանգին՝ Պարբերողի, Մէլքէջի, Ակնցի, Արաբկիրցի, Զմբլկածակցի, Մալաթիացի, Կիւմիւշ-Մատէնցի և շրջակայ բոլոր գիւղացիները կը հրաւիրուին Բ. խորհրդակցական ժողովին որ տեղի պիտի ունենայ Կիրակի (21 Սեպտ.) ժամը 4 ին (4. Ե.) Մեքրոպեան վարժարանի մէջ, կազմելու համար ներքո շայրեանակցական Միութիւնը:

Ս. ԱՄԱՏԵԱՆ, Հ. ԵՐԱՐԱՅԻ, Յ. ՏԵՐՊԵՏԵՐԵԱՆ

ԱՐԱՐԱՅԻ ՏԱՐԵԿԱՐՁԸ

Մեր վաղուան թիւը Արարաի հերոսամարտի տարեկիցին պիտի նուիրուի ուր պիտի երևին յօդուածներ և շարք մը Արարաի ճակատամարտին մասնակցող լէգէոնականներու դրուագներէն:

Պիտի հրատարակուի հոյակապ յօդուած մը ՍՈՒՐԻՆ ԳԱՐԹԵՆԻԱՆԷ

և այդ թիւով՝ առաջին անգամի համար կ'ըրթ լուսատիպ պատկերներ:

1. Արարայի յարձակումէն յետոյ հայ լէգէոնականներու ստացած պատանշաններու արարողութիւնը պատկերող:

2. Միաք շափուհեանի լուսանկարը Արարաի հերոսներէն մին, մեղաւոր:

3. Պօղոս Զանոսեանի լուսանկարը 19ին վերաւորուած և 15 օր վերջ մեղաւոր:

Եւ կ'ըրթարթի սկսեալ ամեն օր մեր ընթերցողներն պիտի գտնեն «Ա. Մամուլ»-ի մէջ մէկէ աւելի պատկերներ ամբողջ շարքով մը:

Տեղական Լուրեր

ԹԱՂԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ հետեւեալ կը ծանուցանէ. — Կախարակի իրատեղով թղթարուած ներածութիւնը գործածուած հազուամեթու համար, 3 պայման կը պարունակէ. 1. Այդ տպարանները սեւ նուազանգիստ փոխադրուելով պէտք է հակահիսուին հրապարակ գրուելէ առաջ: Միայն այդ պայմանով կարելի է այդ հազուամեթու մաքսատուէն դուրս հանել: 700 դր. տուրք պիտի ստնուի իւրաքանչիւր քիւլիքով վրայ: 2. Այս որոշումը պիտի գործադրուի իր հրատարակուած օրէն իսկ: 3. Ելեւմտական նախարարութիւնը պիտի հսկէ անոր գործադրութեան:

ՀԵՂԻՆ Կարմիր — Պաշն Օգոստոս ամսոյն իր գործունէութեան համարատուութիւնը կուտայ ուրկէ կը քաղենք հետեւեալ թիւերը. — Օգոստոս ամսոյն՝ մէջ Հելլէն Կարմիր Պաշն կողմէ զանազան հաստատութեան մէջ խնամուած են 10, 219 յոյն, 862 թուրք, 1164 հրեայ, 285 հայ, և 189 կաթոլիկ, ընդամենն 12,719: Բաշխում են 13,104 դեղագիր:

ԱՌՈՂՁԱՊԱՂԱՅԱԿԱՆ իշխանութիւնները ամէն ճիգ կը թափեն առաջին անգամ համար բոլոր հիւանդութեանց և մանաւանդ ժամատախտի գէմ այս առթիւ բոլոր նպարդիւնաց խանութիւններու մէջ հաստատուած են ծուղակներ, բռնելու համար մուկեր: Յատուկ պաշտօնեայ մը ամէն օր խանութիւններ կը պատի և կը հաւաքէ բռնուած մուկերը, որոնք կ'ենթարկուին մանրէաբանական վերլուծումի: Ասկէ զատ հելլէն իշխանութիւնները քաղաքացիներուն ճրթոյն կուտան, մուկերու սպաննման համար:

ՀՐԱԻԷՐ

Քաղաքս գտնուող բոլոր հայ լէգէոնականները կը հրաւիրուին այս երեկոյ ժամը 7.30ին անպայման յերկայ գտնուելու Հայ Ժողովուրդի Տունը, խիստ կարեւոր խորհրդակցութեան մը համար:

Իսկ եթէ ժամին անտրամադրութեան պատճառաւ ներկայ ըլլալ չկրցողները գտնուին անպատճառ կիրատ. ժ. 11ին հաճին Բաթէ գտնուելու Յ. ԱՒԵՏԻՍԵԱՆ Ա. ԹՈՄԱՏԵԱՆ

ՎԵՐՁԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պօլիս 20 Սեպտեմբեր 1919

ՀԻՆԳԵՐՈՒ ԻՈՐՀՈՒԴԸ

Հինգերու Պորհուրդը գումարուեցու նախագահութեամբ Գլխմանսօի, ներկայ էին Լոյս Զօրճ, Թիթօնի, Բօք և Մաթօնի Պորհուրդը լսեց նաև Ֆօշ և Ռտարէօ և ստացաւ Ֆիլուսի վրայ վերջին տեղեկութիւնները, և զրազեցաւ Արեւելքի խնդրով, մասնաւորապէս Թուրքիոյ ինչպէս նաև ամերիկեան յանձնառութեամբ:

ԱՐԵԻ ԱՓՐԻԿԷԻ ՅԱՆՏՆԱՌՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ յանձնուած Արեւելեան Ափրիկէի վարչութեան յանձնառութիւնը ընդունուեցաւ Հարաւային Ափրիկէի Միացեալ Պորհուրդէն:

ՄԱԺՕՐ ԱՌՆՈԼՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ամերիկեան նպաստամատոյցի հասած հեռագիր մը կ'ձանուցանէ անոր նախագահին Մ. Արնօլտի անմիջական վերադարձը:

ԳԼԷՄԱՆՍՕ ԵՒ ԼՕՅՏ ԶՕՐՃ

Թերթերը կ'կարծեն թէ՛ Լոյս Զօրճի և Գլխմանսօի տեսակցութիւններն առաջին կարգի դիւանագիտական նշանակութիւն մը ունին կ'ընդհանուրեն երկու պետական մարդիկը իրենց փութկոտութեան համար Սուրիոյ խնդրոյն քննութեան պատճառաւ և կ'եզրակացնեն որ երկու երկիրներու տրտաքին քաղաքականութիւնն այլեւս իբրեւ հիմ պիտի ունենայ վերայի դաշնագիրը:

ՀԱՄԱՅԱՅՆՈՒԹԻՒՆ ԳԼԷՄԱՍՕԻ ԵՒ ԼՕՅՏ ԶՕՐՃԻ

Բարիզէ կ'հեռագրեն թէ՛ Համաժողովը հաստատած է Գլխմանսօի և Լոյս Զօրճի համաձայնութիւնը Սուրիոյ խնդրոյն վրայ, վերապահելով որ այն պարագային որ Մ. Նահանգները Արեւելքի գործոց պիտի միջամտեն, համաձայնութիւնը կրնայ փոփոխութեանց ենթարկուիլ:

ԼԱՆՍԻՆՔ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ

Լոնտօնէ կ'հեռագրեն թէ՛ Մ. Լանսինք Մ. Նահանգաց արտաքին գործոց նախարարը պիտի հրաժարի: Այս հրաժարումը կ'վերաբերի Մ. Նահանգաց արտաքին յարաբերութեանց մէջ հանդիպումն գտնարութեանց:

ՖՐԱՆՍԱՒՈՒՆ ԳՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

Գնդ. Ժարտինիէ, պետ Անատոլու մեկնող ֆրանսական յանձնաժողովին Բարիզ մեկնած է: Յանձնաժողովը իր տեղեկագիրը պիտի յանձնէ Համաժողովին:

ԼՕՅՏ ՄԻՆԵՐ Ի ԲԱՐԻՉ

Լոյս Միլնէր գողթային նախարարը, որ մօտեւ եղիպտոս պիտի մեկնի, քննութեանց աշխատութիւնները վարելու համար, Բարիզ կ'գտնուի, ուր եկած է իբրեւ Մեծն Բրիտանիոյ ներկայացուցիչ ստորագրելու Աւստրիոյ հետ կընքուելիք դաշնագիրը:

ՖՐԱՆՍԱՒ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկեան Մերոկոյոյր վաւերացուցած է ֆրանսո-ամերիկեան դաշնագիրը որով ոյժով՝ իթէ ֆրանսա յարձակում կ'է Գերմանիոէ Ամերիկա անոր օգնութեան պիտի հասնի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ԱՐՁԱԿՈՒԴԸ

Հոռոմէ կը տեղեկացնեն թէ՛ հակառակ Համաժողովին աշխատութեանց զաղար մը տալու համար շրջած լուրերուն, Համաժողովը դեռ 15 օր պիտի շարունակէ իր նիստերը, մինչեւ բոլոր տեղիքներու կարգադրութիւնը:

ԻՏԱԼԻՈՅ ՊԱՀԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Թերթերը կ'զրեն Թօթօնի մօտաւոր գալուստը Հոռոմ, կ'կարծեն թէ՛ Գլխմանսօի, Լոյս Զօրճի և Թիթօնի միջև համաձայնութիւն մը յառաջ եկած է Ֆիլուսի իտալացման համար Անկից մաս մը Ազգերու Դաշնակցութեան պիտի կառավարուի Գեո կ'սպասուի Մ. Ռիլանի հաւանութեան:

ԱՐԵԻԿԱՅԻ ՏԵՐՈՒԹԵԱՆՅ ԲԱՆԱԿՆԵՐԸ

Բարիզէ կ'տեղեկացնեն թէ Բարձրագոյն Պորհուրդը, Մարաշիսա Ֆօշի առաջարկին համեմատ, քուլարկած է որոշում մը որով համեմատ պուլկար բանակը պիտի կազմուի 20,000 հոգիէ, կամաւորներէ բաղկացած գերման բանակին նման Այս որոշման համեմատ պուլքանեան միւս տէրութիւններն եւ բարոյապէս միայն ստիպուած պիտի ըլլան իրենց բանակներու թիւը նուազեցնել, սահմանափակելով գինուորագրութեան թիւը:

ՌԻԼՍԸՆ ԿԸ ՀԱՐՈՒՆԵԿԷ

Մ. Ռիլան կը շարունակէ իր պայտը Մ. Նահանգաց մէջ, ընդունել տալու համար հաշտութեան դաշնագիրը և ազգերու ընկերակցութիւնը, Մամուլը մղուած այս պարագայի եղբակացութեան մասին զատ զատ կարծիքներ ունի:

ԹԻՐՕՆԻ ԿԸ ՄԵԿՆԻ

Մ. Թիթօնի մեկնեցաւ դէպի Հոռոմ, կատարան գացած Լին ոչնչիլ մաղթելու յանուն ֆրանս. կառավարութեան Համաժողովին քարտուղարը և իտալական դեսպանատանէն և գաղութէն պատուիրակներ:

ԼՕՅՏ ԶՕՐՃ ԿԸ ՄԵԿՆԻ

Լոյս Զօրճ Բարիզէ մեկնեցաւ և հասաւ Լոնտօն:



ՅՊԱՐԱՆ ԱՐԱՄՈՒՐԵԱՆ

ՀՐՄՆՈՒԿ 1883ԻՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին զրբեր, զրբոյկներ, տեղական, յայտարարու-

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակ-

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրութիւններ, երկրորդ կողմէն նամակ-հրատար-

Ամեն լեզուէ՝ շԱՅԵՐԵՆ, ՅՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՅՈՒՐԲԵՐԵՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԵՏՎՈՒՄԻՆ

ԱՐԵՎԵԼԱՆ ԳՈՅՆԵՐՈՒՄ

Մամուլ եւ խնամակարգ գործ օրուան գիներու վրայ

Տպարանս բաց է առաջոտ միջոց կէս գիշեր

խնդրանկներու համար

Վ Ճ Ա Ր Ս Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

ԱՐԵՎԵԼԱՆ ՄԱՍՈՒԼ

Թերթիս ծառայք աւելի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վի-

Գոհացուցիչ պարտականութիւններ փութ կամ մեծ, մեկ կամ աւելի ծա-

Իրևումներ կ'ընդունուին առաջընէ միջոց կէս գիշեր:

Կ Ա Ն Խ Ի Կ Վ Ճ Ա Ր Ո Ւ Ս

Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն նոր տարեշրջանի առթիւ, հայերէն եւ ֆրանսերէն ա-

Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ է:

ՕՍՆԻԿ Կ ԹԱՂԵՈՍԵԱՆ

Մանուկներ, Ուսուցիչներ

Յ Ա Ն Ձ Ե Կ Ա Ռ Ն Է

Ա.— Անկէր Սաքարն զրուսթեամբ վեց ամսուան մէջ ուսուցանել ֆրան-

Բ.— Երեք ամսուան մէջ ֆրանսեաներէն նամակներ եւ խնդրագրեր:

Կը կատարէ զբաւոյր փոխադարձ հարազատ թարգմանութիւններ հայ ֆրանսեան եւ թրք լեզուներով:

Հասցէ, Այս Երկրի թաղ, Տիպէր փողոց թիւ 18:

Ն. ՆԵՐՍԵՍԵԱՆ (Ց)

Կ Ր Օ Ն

Ա Ջ Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ժան ժող Ռուսոյ՝ Տիտոյի սկա-

Ահա իր խօսքերը:

«Մարդկային ծանօթութիւններու մէջ չպիտի գտնեն ծագում մը, որ համապատասխանէ այն գաղափարին, զոր կը սիրեն կազմել անոնց մասին:

Անոնց առաւելութիւններուն կամ բարձրանումներուն վրայ նուազ կատարած ապրիլ ըլլալինք, եթէ անոնք առաջինութիւններու արգիւնք ըլլալին»:

Եթէ այս ցուցումները ճիշդ եւ արդարացի համարինք, հարկ անհրաժեշտ է որ վարժարաններէն, գործանոցներէն եւ այլնէ վտարենք տարրաբանութիւնը, որ առաջ եկած է Ալքիմիայէն, այն է ծոյլ բախտախնդրներու հնարած եւ իզոթ զբաւ խաբէրալութիւններէն:

Ասկէ վերջը կուգան երկրաբանական եւ մարդաբանական նորանոր եւ հատուկօրէն տեղեկութիւններ եւ տեսութիւններ, որոնք կրօնի նոյնիսկ գաւանդաբանական մասին հետ ունէ առնչութիւն մը չունին:

Յետոյ Լամարք. Տարվին, Հեկէլ և այլնի անունները յիշուելով բնաշրջութեան օրէնքին վրայ սխալ եւ թերի կիրառումներ տեղի կունենան, ինչ որ ի վերջոյ անցողիկ կերպով ցոյց տալի տուելու:

Ի վերջոյ, պահ մը կրօնի կամ կրօններու պատմութեան անգրադատնալով, անոնց քաղաքակրթութեան մատուցած անուան ծառայութիւններէն առանց եւ ո՛չ մին յիշուել, մէկ կողմէն կրեն, թէ կրօնի անուանով անթիւ անհամար արիւնհեղութիւններ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Կրակի դիմ.
NATIONAL UNION SOCIETY LTD.
LONDON
CENTRAL INSURANCE CO. LTD.
LONDON
Փոփայիւ.
PHOENIX ASSURANCE COMPANY LTD.
LIVERPOOL
Իրենց մանրամասնութեանց համար.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ
L. ԵՒ L. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ԹԵՆՏՈՐՈՍ ԲՍԱԽՆՈՒՑԻՍ
ՋՐԱՐՈՒԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ
Ջրարուժութիւնը մարթը կը մաքրէ, արտաշնչութիւնը կը գիւրացնէ արեան շրջանը կը փութացնէ և մարմնոյն անդամալոյծ մասերուն ոյժ և առողջութիւնը կը պարզէ:

Տօքս Բ. ԳԱԼԹԱՔԵԱՆ
ՏՐԱՆՍԿԱՆ ՀԱՍՏԱՍՏԱՐԱԷ ՎԿՅՈՒՄՍ
ՆԻ ՌԱԲԵՋ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ
Մանկաբարձ, կնիստարոյժ, եւ ներքին հիւանդութեանց մասնագէտ:
Ամենաարագ և վերջին գրութեամբ դարձանուծի Հիւանդ կ'ընդունի ամեն օր իր բնակարանը. Հայոց թաղ Բրէնթան արձարանին դիմացի փողոց թիւ 4: Իսկ կէսօրէն վերջ ժամը 2-5. Ջարե՛ն Ենարհաւորի և Մեսեանի զեղարանները:
Ազգատոց՝ ձրի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը. Կ. Վ. 2-5 յիշեալ զեղարաններու մէջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՕԼԵՃ
ԲԱՐԱՏԻՍՕ
Վարժարանի մուտքի քննութիւնները կ'սկսին Ապրիլ 22ին երկուշաբթի օր: Գիշերօթիկները կ'ընեն քննութիւնը Ապրիլ 24 չորեքշաբթի օր, կէսօրէն ետք: Գոսպատմութիւնը կ'ընեն 29ին երկուշաբթի օր:

ՄԹԵՐԱՆՈՑ
ՄԻԱԿՈՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՊԵՐՃԱՆՔԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Արդոյ հասարակութեան կ'ծանուցուի որ ծխախոտի բէժիւն պերճանքի արտադրութիւնները վաճառելու համար միտրանոց մը բացուած է Ֆաստուլի հրապարակին վրայ թիւ 73, ոստիկանատան դիմացը:
Այս միտրանոցը հասարակութեան տրամադրութեան տակ պիտի գնէ իրենց նշանակեալ ճշգրիտ գիներով պերճանքի յատուկ արտադրութիւնները:
Անոնք կ'ազգական ծխախոտներէ և սիկոնէթներէ, ձօքէյ-Քլուպ, Սէրբլը ար Պոմբօր, Եէնիճէ, Կրան-Բրի, Էն-Ալա, Սէրբլը արժիան, Պաֆրա Մոտէն, Ալա և Էքսթրա-Էքսթրա:

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ
Գարնաշրի Աշխատանքաց Մանկապարտէզի համար երկու կարող մանկավարժներ կը փնտռուին, փափաքողը կրնան զի'ել Մանկապարտէզ ամեն օր կէսօրէն յետոյ ժամը 4 էն 6:

Կարողութիւն մը, օրէնք մը և այլն, որ չարաչար գործածուած չըլլայ:
Ձեզմուսը կրնայ արգելու լաւ գործածութիւնը:
Մարդիկ կը սարժին թէ իրենք բանական և առնչեալներ են, միթէ հարկ է որ բանականութեան տէքը կուրցնենք և լեզուն կարենք թափենք, միմիայն այն պատճառով որ զանոնք չարաչար գործածողներ գտնուած են և կը գտնուին:
Վերջին և աննոյնը թաց կերպով աշխարհուեր պատերազմին զլսուոր պատճառները կրօնական ամեն նկատումէ դուրս, զուս քաղաքական և տնտեսական թիւրմացուած շահեր և հայրենասիրական այլտնակ զգացումներ ըլլալուն համար, պէտք է որ մարդիկ այսուհետեւ շահ մը չգնան առն, իրենց սղգը կամ նմանները չսիրեն:
Կրօնը՝ մարդկային գործունէութիւնը ո՛չ թէ կը շրտէ, այլ կը կանոնաւորէ, կարգի կը դնէ:

ԶԵՐ
Ժանուցումներու համար,
Պոլիս Կարաքա, Մոսկու, Հասան Փաշա խան, թիւ 18: